

26784

ԽԱՀՄ ՖԺԿ

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻՆ
ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Ներկա հրահանգը վերապված է 1935 թ. հրատարակած՝
«Հրահանգ պետական աշխատավորական խնայողական
դրամարկղներին՝ ավանդային գործառնության գծով»
գրույկից

336

Խ-11

Հրատարակ. Պետաշխնայդրամարկղների լիվ Պետվարկի Հայկական
ԽՍՀ վարչության

ՅԵՐԵՎԱՆ

1937 թ.

ԱՌԱՆՁԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1935—1936թ.թ. ընթացքում մտցվել են հետևյալ փոփոխություններն ավանդային գործառնություններին 1935 թ. հրատարակած հրահանգի բնագրում:

1. ԽՍՀ Միության ժողովրդական համիսարների Խորհրդի 1936 թ. 14 հունիսի վերջին հիման վրա՝ խնայողական դրամարկղների կողմից վճարվող տոկոսների դրույքները 1936 թ. հունիսի 1-ից իջեցված են՝

Առանձին քաղաքացիների և կոլտնտեսությունների ավանդների և ընթացիկ հաշիվների համար—մինչև 3 % տարեկան Իրավաբանական անձանց ավանդների համար բացի կոլտնտեսություններից—մինչև 1 % տարեկան:

Այդ կապակցությամբ փոփոխվել են հրահանգի 16, 36, 37 և 54 հոդվածները, նաև վերացվել և հրահանգի 53 հոդվածը:

2. Կորցրած զբոսայկի փոխարեն ավանդատուներին նոր խնայողական զբոսայկ տալու համար, խնայողական դրամարկղները պետք և գանձեն, նոր ձևի խնայողական զբոսայկները մտցնելու մոմենտից վճար 1 ուսուրու չափով:

Այդ կապակցությամբ փոփոխվել և հրահանգի 51 «գ» հոդվածը:

ՊԵՏԱԾԵԽԵՆԱՅԻՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ

1. Պետական աշխատավորական խնայողական դրամարկղները հնարավորություն են տալիս բնակչությանը դրամային խնայողություններն ու ազատ միջոցները պահելու վորպես ավանդ և տոկոսներ են վճարում ավանդատուներին այդ ավանդների համար:

Խնայողական դրամարկղները պիտի պահպանեն ավանդների ներգրավման լիակատար կամավորությունը, ավանդների անձեռնմխելիությունն ու գաղտնապահությունը և բնակչության մեջ լայնորեն ժողովրդականացնեն խնայողական դրամարկղների ունեցած նշանակությունը սոցիալիստական շինարարության ֆինանսավորման գործում, ինչպես և ավանդատուներին տրվող իրավունքներն ու առավելությունները:

1. ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի կողմից 1929 թ. փետրվարի 20-ին հաստատված «Պետական աշխատավորական խնայողական դրամարկղների վերաբերյալ կանոնադրություն» խնայողական դրամարկղների ավանդատու հանդիսացող քաղաքացիներին տրվում են մի շարք իրավունքներ և առավելություններ: Այդ իրավունքների և առավելությունների թվին են պատկանում՝ ավանդների անվճարության յերաշխիքը, ավանդների գաղտնապահությունը

և անձեռնմխելիությունը, ավանդների համար կտակային կարգադրություններ անելու իրավունքն՝ առանց սահմանափակելու այն անձանց շրջանը, վորոնց կտակվում է ավանդը՝ նաև հարկային արտոնությունները:

3. Խնայողական գրամարկդները մուծած ավանդների վողջամացությունն ու անվթարությունը յերաշխափորվում է ԽՍՀ Միություն կառավարության կողմից:

4. Ավանդների գաղտնապահությունը — Պետական աշխատավորական խնայողական գրամարկդների մարմիններում աշխատող, նաև խնայողական գրամարկդների վերստուգումներ կամ հետադոտումներ կատարող բոլոր անձինք պարտավոր են խստիվ պահպանել ավանդատուների գործառնությունների գաղտնապահությունը: Ամեն տեսակի տեղեկանքներ ավանդատուների մասին, նաև ավանդների հաշիվների դրություն մասին, բացի իրենց՝ ավանդատուներից կամ նրանց հավատարմատարներից, խնամակալներից և խնամատարներից, տրվում են միմիայն դատական և քննչական մարմինների գրավոր պահանջներով՝ իրենց մոտ քննվող քրեյական գործերի կապակցությամբ (քաղաքացիական գործերի համար տեղեկանքներ չեն տրվում):

Ուրիշ վոչ մի պետական մարմին, ներառյալ և ֆինանսական մարմինները, իրավունք չունեն պահանջելու նշված տեղեկանքները: Այս հոդվածի կանոնները խախտող անձինք յենթարկվում են քրեյական պատասխանատվության:

5. Ավանդների անձեռնմխելիությունը — Խնայողական գրամարկդները մուծած ավանդները վոչ մի կերպ չեն կարող յենթարկվել տույժի կամ կալանքի, յեթե դրա համար չկա քրեյական գործերի դատական և քննչական մարմինների վորոշումները:

Ավանդները քաղաքացիական գործերով տույժի կամ կալանքի չեն յենթարկվում:

6. Կտակային կարգադրություններ: — Ավանդատուն իրավունք ունի այս հրահանգի 49 հոդվածով սահմանված կարգով մատնանշել խնայողական գրամարկդին այն անձանց, վորոնց տրվելու յե ավանդն իր մահից հետո: Ավանդատուները խնայողամարկդներում յեղած ավանդները կարող են կտակել ցանկացած անձնավորությանը կամ կազմակերպությանը:

Յեթե ավանդը կտակվում է վոչ թե մի անձնավորության կամ մի կազմակերպության, ալ մի քանիսին, ապա ավանդատուն ալզ ժամանակ պիտի մատնանշի յուրանշյուր ժառանգի բաժնի չափը տոկոսներով:

Ավանդատուն իրավունք ունի փոփոխելու կամ վերացնելու կտակային կարգադրությունը: Կտակային կարգադրությունը չի զրկում ավանդատույին իր կենդանության ժամանակ իր ավանդը անորինելու իրավունքից:

Խնամակալության կամ խնամատարության տակ գրանվող անձինք, նույն թվում՝ անհավահաս ավանդատուները, իրավունք չունեն ավանդների համար կտակային կարգադրություններ անելու:


7. Ավանդներից ստացվող յեկամուտներն ազատված են հարկադրումից:

Ավանդատուների մահից հետո նրանց ժառանգներին անցնող ավանդները յենթակա չեն այն հարկին, վորալին դանձվում է ժառանգության կամ նվիրաբերության կարգով ժառանգած գույքից:

II. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ (ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ) ԱՎԱՆԴՆԵՐԸ

8. Բնակչության (առանձին քաղաքացիների) ավանդները կոչվում են ֆիզիկական անձանց ավանդներ:

Խնայողական գրամարկդի ավանդատու կարող է լինել ինչպես չափահաս, նույնպես և անչափահաս քաղաքացին:



Մուծող ե կոչվում ավանդատույի անվան ավանդ մուծող անձնավորությունը:

9. Ավանդները կարող են մուծվել խնայդրամարկղ-ներն առանց ժամկետի մատնանշելու: Այդպիսի ավանդ-ները տրվում են ավանդատույի պահանջով անմիջապես և կոչվում են «ցպահանջ ավանդներ» (անժամկետ):

Վորոշ, նախապես պայմանավորված ժամկետով մուծ-վող ավանդները կոչվում են «ժամկետային»: Այդ ավանդ-ները կարող են մուծվել 3 ամսից վոչ պակաս ժամկե-տով:

Պայմանական են կոչվում այն ավանդները, վորոնք կարող են տրվել միայն այն վորոշ պայմանները պահ-պանելով կամ առանձին հանգամանքները վերահասնե-լուց հետո, վորպիսիք ծանոթագրված են մուծողի կող-մից՝ ավանդը մուծելու մոմենտին: Ընդամին՝ ավանդնե-րի պայմանները չպիտի հակասեն որեքին և չպիտի ու-նենան վորեւ վոչ պարզ կողմեր կամ դժվարություններ՝ այդ պայմանները կատարելու վերաբերմամբ: Ավանդի պայմանները կարող են փոփոխվել միայն մուծողի և ավանդատույի ընդհանուր համաձայնությամբ:

10. Ավանդներն ընդունվում են ինչպես անվանա-կան, նույնպես և ներկայական: Անվանական ավանդի ավանդատու յե հանդիսանում այն անձնավորությունը, վորի անունով դրամարկղն ընդունել ե ավանդը և տվել ե ավանդային փաստաթուղթ: Ներկայական ավանդ-ների ավանդատու համարվում ե ավանդային փաստա-թուղթ ներկայացնողը (ներկայիչի անունով դուրս գըր-ված խնայգրքույկը և նրան կից վերահսկիչ թերթիկը):

Ներկայական ավանդներն ընդունվում են միայն շրջանային և քաղաքային խնայդրամարկղների գործառ-նության մասերը: Պայմանական ավանդներ ներկայիչի անունով չեն ընդունվում: Ներկայական ավանդների

համար կտակային կարգադրություններ չեն թույլատըր-վում:

11. Գրագետ ավանդատուն կարող ե իր ցանկու-թյամբ բանալ ընթացիկ հաշիվ: Այդ դեպքում նա խնա-յողական գրքույկի փոխարեն ստանում ե չեկային և հաշվարկային գրքույկներ:

Ավանդատուներն իրենց ընթացվկ հաշիվը տնորի-նում են ներկայական կամ անվանական կերպով դուրս գըրվող չեկեր տալու միջոցով: Ներկայական, նաև ժամ-կետային և պայմանական ընթացիկ հաշիվներ չեն բաց-վում:

III. ԱՎԱՆԴՆԵՐԸ ՏՆՈՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

12. Ամեն մի չափահաս ավանդատու (բացի խնամա-կալության կամ խնամատարության տակ յեղողներից), նաև անչափահասը, վորը անձամբ ե մուծել ավանդն իր անունով, իրավունք ունի տնորինել ավանդը և այդ ավանդից հասնող յեկամուտը:

Ավանդները լիովին կամ մաս-մաս կարող են տրվել ավանդատուներին, նրանց որինական ներկայացուցիչներին և ավանդատուներից ու նրանց որինական ներկայացու-ցիչներից հավատարմագրեր ունեցող անձանց (այս հրա-հանգի 17—21 հոդ):

Անչափահաս ավանդատուները հավատարմագրեր տալու իրավունք չունեն:

Ներկայական ավանդը և այդ ավանդից հասնող յեկա-մուտը տնորինելու իրավունքը տրվում ե ամեն մեկին, վորը խնայդրամարկղին կներկայացնի ներկայական խնայողական գրքույկը և վերահսկիչ թերթիկը:

13. Անգործունակ չափահասների՝ հոգեկան հիվանդ-ների, թուլամիտների, նաև իրենց ֆիզիկական դրության հետևանքով իրենց իրավունքներն ինքնուրոյնորեն պաշտ-պանել չկարողացող անձանց ավանդները տնորինելու իրա-

վունքը պատկանում է դրանց խնամակալներին, կամ խնամատարություն յեղած զեպքում՝ (յեթե չափահասն իր ֆիզիկական զրուծյան հետևանքով չի կարող պաշտպանել իր իրավունքները) հենց իրենց՝ անդործունակներին, նրանց խնամատարների համաձայնությամբ: Յերկու զեպքումն էլ՝ ամբողջ ավանդը կամ նրա մի մասն ստանալու համար պահանջվում է խնամակալական և խնամատարական մարմինների գրավոր թույլտվությունը: Իսկ ավանդի տեղոսներն ստանալու համար՝ խնամակալական և խնամատարական մարմնի թույլտվությունը չի պահանջվում:

14. Վորեւ մեկի կողմից 18 տարեկան հասակի չհասած անչափահասների անունով մուծած ավանդները՝ տնորինում են՝

ա) 14 տարեկանից փոքր անչափահասների ավանդները՝ ծնողները և փոքրզբողները (առանց խնամակալական և խնամատարական մարմնի կողմից նշանակվելու) կամ անչափահասների խնամակալները (վորոնք պիտի ներկայացնեն խնամակալական կամ խնամատարական մարմինները վորոշումներն իրենց խնամակալներ նշանակելու մասին):

Մինչև 14 տարեկան հասակ ունեցող անչափահասների ծնողները և խնամակալներն ավանդը կամ նրա մի մասն ստանալու համար պիտի ներկայացնեն խնամակալական և խնամատարական մարմինների գրավոր թույլտվությունը:

Ավանդի տեղոսներն ստանալու համար խնամակալական և խնամատարական մարմինների թույլտվությունը չի պահանջվում:

բ) 14-ից մինչև 18 տարեկան հասակ ունեցող անչափահասների ավանդներն՝ իրենք անչափահասները, բայց ծնողների (փոքրզբողների) կամ խնամատարների գրավոր համաձայնությամբ (վերջիններս պետք է ներկայացնեն խնամակալական և խնամատարական մարմինների վորոշումները՝ խնամատարներ նշանակելու մասին):

Յերկու զեպքումն էլ՝ տնորինել ավանդը կամ թույլտվություն տալ անչափահասին ավանդն ստանալու համար կարող են միայն յերկու ծնողները միասին: Մի ծնողին այդ իրավունքը տրվում է միայն յերկրորդ ծնողի մահվան, դատարանով նրան ծնողական իրավունքներից զրկելու կամ ապահարզանի մասին խնայդրամաբեղին փաստաթուղթ ներկայացնելու զեպքում: Վերջին զեպքում հարկավոր է միայն այն ծնողի համաձայնությունը, վորի մոտ մնացել է անչափահասը:

15. Մուծողն իրավունք չունի տնորինելու ուրիշի անվան մուծված ավանդը: Այս կանոնից բացառություններ են թույլատրվում միայն այն ժամանակ, յերբ մուծողը, ուրիշի անունով պայմանական ավանդ մուծելով, պայմանում վորոշել է, վոր նա կարող է յետ ստանալ ավանդը կամ հանձնել մի ուրիշին՝ ավանդի պայմանում նշված հանգամանքները վերահասնելուց առաջ ավանդատույի մահվան զեպքում:

Մինչև պայմանական ավանդը մուծելու ժամանակ նշված հանգամանքների վերահասնելը, այդ ավանդի տնորինումը կարող է կատարվել միայն մուծողի համաձայնությամբ այն անձի հետ, վորի անունով մուծված է ավանդը:

16. Ժամկետային ավանդը՝ մինչ ժամկետի վերահասնելը կարող է տրվել բացառիկ զեպքերում՝ խնայդրամաբեղի վարիչի թույլտվությամբ:

17. Հավատարմագիր կարող է տրվել յերեք տարուց վոչ ավելի ժամկետով: Իսկ յեթե հավատարմագրի գործողության ժամկետը չի նշված նրանում, ապա նա վավերական է համարվում մեկ տարվա ընթացքում՝ այն տալու որից: Ավանդի տնորինման հավատարմագրերը կորցնում են իրենց ուժով՝ ավանդատույի մահվան որից:

18. Հավատարմագրի ստորագրությունը վավերացնել կարող է նոտարական գրասենյակը, Ժողատափորը, քաղ-

(շրջագործկոմեր, գյուղխորհուրդեր, նաև պետական, կոոպերատիվ, հասարակական հիմնարկությունն ու ձեռնարկությունը, կամ այն զինվորական մասը, վորտեղ ավանդատուն ծառայում է և այն տան տնային վարչությունը, վորտեղ գրանցված է ավանդատուն:

Հավատարմագրի վրա յեղած ավանդատույի ստորագրությունը վավերացվում է վերոհիշյալ կազմակերպություններից վորեւ մեկի պատասխանատու անձի ստորագրությամբ և կնիքով: Անգրագետ ավանդատուների կողմից տրված հավատարմագրերը պիտի հաստատված լինեն նոտարական գրասենյակի, ժողգատավորի, շրջագործկոմի, քաղխորհրդի կամ գյուղխորհրդի կողմից:

19. Յեթե խնայգրամարկղում յեղած անձնական քարան ունի ավանդատույի ստորագրությունը, իսկ հավատարմատարը լիազորված է միայն մեկ անգամ գրաֆն ստանալու համար (միանվագ հավատարմագիր) և այն ել 300 ուրբուլց պակաս գումարով, ապա ավանդատույի ստորագրությունը հավատարմագրի վրա կարող է և վավերացված չլինել և դրամը տրվում է ստորագրությունը համեմատելու միջոցով:

20. Հավատարմագիրն առաջին անգամ խնայգրամարկղին ներկայացնելու ժամանակ՝ դրամարկղում պիտի մնա այդ հավատարմագրի պատճեն, վորը վավերացվում է խնայգրամարկղի վարիչի կամ ավագ վերահսկչի և վերահսկչի կողմից: Այդ պատճեն պիտի պահվի հատուկ գործում: Անձնական հաշվի վրա նշումն է արվում հավատարմագրի մասին:

Հավատարմագրի իսկականը պիտի ներկայացվի խնայգրամարկղին՝ ամեն անգամ դրամ ստանալու ժամանակ: Մի անգամ գրաֆն ստանալու համար տրված հավատարմագիրը մնում է խնայգրամարկղում:

21. Ավանդատուն իր հավատարմագիրը կարող է գրանցել խնայգրամարկղում յեղած անձնական հաշվում:

Դրա համար նա պիտի անձնական հաշվի «նշումների համար» սյունակում գրի՝

«Ավանդը տնորինել լիազորում եմ»

վորի ստորագրությունը հաստատում եմ»: Ավանդատուն այդ նշումը հաստատում է իր ստորագրությամբ և ցույց է տալիս գրանցման ուրը: Ավանդատույի ստորագրությունը վավերացվում է վերահսկչի կողմից:

Ավանդի այդպիսի հավատարմագիրը ուշժի մեջ է հավատարմագրի համար սահմանված ժամկետի ընթացքում (հոգ. 17):

22. Ավանդի տալը դադարեցվում է այն դեպքում, յերբ այդ ավանդի վրա կալանք է դրվում (քրեական գործերի դատական և քննչական մարմինների կողմից) կամ թե այն դեպքում, յերբ մահացածից հետո մնացած ունեցվածքի պաշտպանման միջոցներն են ձեռնարկվում:

Ավանդի կալանքի կամ տալն արգելելու մասին նշումն է արվում անձնական հաշվում՝ խնայգրամարկղի վարիչի և վերահսկչի ստորագրությամբ:

Դատական մարմինների որինական ուշժի մեջ մտած դատավճիռներով և վորոշումներով ավանդները տրվում են այն անձանց կամ հիմնարկություններին, վորոնք մատնանշված են այդ դատավճիռներում և վորոշումներում:

Մահացածների այն ավանդները, վորոնք մոծված կամ կալանավորված են ժառանգության պաշտպանություն միջոցներ ձեռնարկելու կարգով, տրվում են այն մարմինների վորոշումների հիման վրա, վորոնց կարգագրությամբ ունեցվածքի պաշտպանության միջոցներ են յեղել ձեռնարկված, կամ թե մահացած ավանդատիրոջ ժառանգներին:

Ներկայչական ավանդներ տալը դադարեցվում է դատարանի վորոշումով՝ խնայգրքույկի կամ վերահսկչի թերթիկի կորուստի դեպքում:

23. Խնայել ամարիկոններին իրավունք է տրվում ան-
վանական անվանդներին համար պահանջելու ավանդա-
տուլից, վոր նա ներկայացնի անցադրային փաստա-
թուղթ, այսինքն՝ անցագիր կամ անցագրի փոխարեն՝
միլիցիայի կողմից տրված ժամանակավոր վկայական:
Զին, ծառայողները ներկայացնում են զինմաների վկա-
յականները: Յեթե ավանդատուն ապրում է գյուղական
վայրում և պարտավոր չի անցագիր ստանալու, ապա
անցագրի փոխարեն ներկայացվում է դործկոմի, միլի-
ցիայի կամ գյուղխորհրդի կողմից տրված վկայականը:

Այդ վկայականն ընդունվում է այն ժամանակ, յերբ
նրա վրա կա վկայականի տիրոջ ստորագրութլոնը՝
հաստատված այն հիմնարկության կողմից, վորը ավել է
այդ վկայականը:

24. Ավանդատուլի մահից հետո, նրան պատկանող
ավանդը տրվում է կտակային կարգադրութլյան մեջ մատ-
նաչված անձանց, վորոնք պիտի ներկայացնեն ավան-
դային փաստաթուղթը, Զադա-ի տեղեկանքը՝ ավանդա-
տուլի մահվան մասին, նաև ստացողի անձնավորութլոնը
հաստատող վկայականը (հոդ. 23):

25. Ավանդատուլի մահից հետո, կտակային կարգա-
դրութլյան բացակայութլյան դեպքում, ավանդը կամ նրա
մի մասը վոչ ավել 300 ռուբլուց տրվում է խնայել ամ-
արիկ ներկայացած ավանդատուլի ժառանգներին՝ առանց
ստացողների ժառանգական իրավունքների մասին նոտա-
րական մարմինների վկայական ներկայացնելու: Այդ
ժառանգները պիտի ներկայացնեն մահացածի ավանդային
փաստաթուղթը, Զադա-ի տեղեկանքը՝ ավանդատուլի
մահվան մասին ու ստացողների անձնավորութլոնը և
ավանդատուլի հետ ունեցած նրանց ազգակցական կապը
հաստատող վկայականներ (վորոնց ուլթիվ ստացողները
ժառանգներ են հանդիսանում): Այդ բոլոր փաստա-
թղթերը պիտի մնան խնայել ամարիկոնում խսկականով կամ

վավերացված պատճեններով: Ներկայացած ժառանգները
դրամն ստանալու ժամանակ պարտավորագիր են տալիս
այն մասին, վոր ուրիշ ժառանգներ ներկայանալու դեպ-
քում՝ նրանք կվճարեն ժառանգութլունից նրանց հա-
նող մասն իրենց միջոցներից:

Համաձայն ՌՍՖՆՀ քաղաքացիական որենսդրքի 418
հոդ. և մյուս դաշնակից հանրապետութլոնների քաղա-
քացիական որենսդրքերի համապատասխան հոդվածների,
ժառանգներ են հանդիսանում ուղակի ծագում ունե-
ցողները (զավակները, թոռները, ծոռները) վորդե-
զրվածները (նրանցից ծագում ունեցողները) և մահա-
ցածի կենդանի մնացած ամուսինը, նաև այն անաշխա-
տունակ և չունեվոր անձինք, վորոնք մինչև նրա մահը
վոչ պակաս քան մի տարի փաստորեն գտնվել են մահա-
ցածի լիակատար խնամքի տակ:

Այն դեպքում, յեթե կտակային կարգադրութլուն
տրված չի յեղել, ավանդը կամ 300 ռուբլուց բարձր
նրա մի մասը կարող է տրվել ժառանգներին՝ նոտարա-
կան մարմինների համապատասխան փաստաթղթեր ներ-
կայացնելուց հետո:

26. Մահացած ավանդատուլի գրքույկը և նոտարա-
կան մարմնի կամ ֆինմարմնի վորոշումները՝ ավանդա-
տուլին բժշկական ողնութլուն ցույց տալու, հիվանդու-
թյան ժամանակ խնամելու, թաղելու և այլնի ծախսերը
ավանդից հատուցելու մասին ներկայացնելուն պես՝
խնայել ամարիկոնները տալիս են համապատասխան գու-
մարներ ավանդից:

Այդ վորոշման մեջ պիտի մատնանշված լինեն՝ տըր-
վող գումարը, հատուցումն ստանալու իրավունք ունեցող
անձնավորութլունը, գրքույկի համարը, վորով տրվում է
գումարը և ավանդատուլի ազգանունը:

27. Այն դեպքում, յեթե մահացած ավանդատուն
ժառանգներ չունի և կտակային կարգադրութլուն չի

թողել, նրա ավանդը համարվում է անժառանգ և տոկոսներին հետ միասին պիտի փոխանցվի բյուջեյի յեկամուտը՝ ֆինանսների գրավոր պահանջով կամ նոտարական մարմնի վկայականով:

28. Արտասահմանում գտնվող խորհրդային քաղաքացիները և ոտարյերկրյա քաղաքացիներն ավանդները տնորինում են հետևյալ կարգով (ԽՍՀՄ ՖԺԿ և ԽՍՀՄ Պետբանկի Վարչության 22/2—32 թ. № № 83 և 84 հրահանգներին համապատասխան):

ա) Այն խորհրդային քաղաքացիներ հանդիսացող ավանդատուները, վորոնք խորհրդային մշտական աշխատանքով են զբաղված արտասահմանում, կամ թե խորհրդային կազմակերպությունների կողմից ժամանակավորապես գործուղվել են արտասահման, իրենց ավանդն ազատ կերպով կարող են տնորինել արտասահմանից (չեկեր և հավատարմագրեր տալ ԽՍՀՄ-ում գտնվող անձանց, հրամաններ տալ այլ անձանց հաշիվներին փոխանցելու համար): Սակայն այդ ավանդատուների հաշիվներում վորևե գումարների ընդունումը թույլատրվում է միայն խորհրդային կազմակերպություններից, իսկ մասնավոր անձերից չի թույլատրվում:

բ) Խորհրդային քաղաքացիներ հանդիսացող այն ավանդատուները, վորոնք մեկնել են արտասահման վորպես մասնավոր անձինք, մինչ ԽՍՀՄ վերադառնալը չեն կարող տնորինել իրենց ավանդը վոչ անձամբ, վոչ ել լիազորի միջոցով (յեթե նույնիսկ վերջինս գտնվում է ԽՍՀՄ-ում): Զի թույլատրվում նաև վորևե անձերից կամ կազմակերպություններից գումարներ ընդունելն՝ այդպիսի ավանդատուների հաշիվներում հաշվեգրելու համար:

գ) ԽՍՀՄ-ում գտնվող ավանդատու ոտարյերկրացիներն իրենց ավանդը տնորինում են խորհրդային քա-

ղաքացիների համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

Ոտարյերկրյա քաղաքացու անվան հաշիվներ բացելը խնայրամարկղում՝ իրավունք չի տալիս ավանդն այդ հաշվից արտասահման փոխադրելու (մաս-մաս կամ լրիվ):

Արտասահման մեկնած ոտարյերկրյա քաղաքացիներ հանդիսացող ավանդատուներն իրենց ավանդը կարող են տնորինել անձամբ կամ հավատարմատարի միջոցով միմիայն ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիտարիատի թույլտվությամբ (յուրաքանչյուր առանձին դեպքում): Ճիշտ նույնպես, ԽՍՀՄ ՖԺԿ թույլտվությամբ կարող են վորևե մեկի կողմից լրացվել արտասահմանում գտնվող ոտարյերկրյա քաղաքացիներին պատկանող ավանդները խնայրամարկղներում:

Յեթե խնայրամարկղին հայտնի չե դառնում, վոր ավանդատուն ոտարյերկրյա քաղաքացի չե, նա պարտավոր է հրահանգի տվյալ կետը հայտարարել նրան, անձնական հաշվի վրա նրան ստորագրել տալով:

IV. ԱՎԱՆԴԱՏՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՎԱՆԴՆԵՐԸ ՏՆՈՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Կադմակերպությունների (հիմնարկությունների, ձեռնարկությունների, կոլանտեսությունների, ընկերությունների կոլեկտիվների և այլն) ավանդները կոչվում են իրավաբանական անձանց ավանդներ:

Խնայրամարկղների ավանդատու լինելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց կատեգորիաների ցուցակը սահմանվում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիտարիատի հատուկ վորոշումով:

30. Իրավաբանական անձանց ավանդների կարգին են պատկանում նաև այն դրամային գումարները, վորպիսիք պատկանում են կազմակերպություններին և

ավանդ են մոծվում կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից (լիազորներ, ղեկավարներ, հաշվետու անձինք):

Այդ պաշտոնատար անձանց համար խնայողամարդկայնորեն կարող են հաշիվներ բացել՝ զանազան միջոցներ, հաշվետու գումարներ և այլն պահելու համար միայն այն կազմակերպությունների անունով, վորտեղ աշխատում են այդ անձինք* (այլալ կազմակերպությունից լիազորություններ ներկայացնելով խնայողամարդկայն) և այն ել միմիայն պետական բանկի բաժանմունքի թույլտվությամբ: Պաշտոնատար անձինք այդ ավանդները կարող են անորինել իրավաբանական անձանց ավանդները անորինելու համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

31. Իրավաբանական անձանց ավանդները կարող են յենթաբաժնի կալանքի և այդ ավանդների վրա կարող ետույժ գրվել դատական մարմինների (քաղաքացիական ու քրեական գործերով) վորոշումների և վճիռների ուլթով, քրեյական գործերի քննչական մարմինների վորոշումների ուլթով, նաև բյուջեյին տրվելիք հարկային և վոչ հարկային վճարումների և սոցալի վճարումների գանձումների գործերով:

32. Առանձին իրավաբանական անձանց ավանդների մասին տեղեկանքներ խնայողամարդկայնորեն պարտավոր են տալ խորհրդային հսկողության մարմինների, դատական մարմինների, (ինչպես քրեյական, նույնպես և քաղաքացիական գործերի) քննչական մարմինների, Ֆինմարմինների, պետական բանկի հիմնարկների և այն ցանցի վերադաս հիմնարկների հարցումներով, վորի մեջ ե մտնում այլալ կազմակերպությունը:

33. Իրավաբանական անձանց անունով կարող ե բացվել միայն ընթացիկ հաշիվներ: Ժամկետային և պայմանական ավանդներ իրավաբանական անձանց անունով չեն ընդունվում:

56013-66

34. Իրավաբանական անձը խնայողամարդկայն պիտի ներկայացնի ավանդը անորինելու համար լիազորված անձանց ազգանուններն ու ստորագրությունների վավերացված նմուշները և կնիքի նմուշը: Խնայողամարդկայն իրավաբանական անձի ավանդային կարգադրությունը կատարում ե միայն այն դեպքում, յեթե համապատասխան փաստաթղթերն (չեկեր, հրամաններ, հավատարմագրեր և այլն) ստորագրված են այդ լիազորների կողմից: Հաշիվ բացելիս՝ իրավաբանական անձը խնայողամարդկայն պիտի ներկայացնի այլալ իրավաբանական անձի գոյության ապացույց (կանոնադրություն, վերադաս կազմակերպության թույլտվություն և այլն): Խնայողամարդկայն ներկայացրած փաստաթղթերի անուններն ու համարները, յերբ և վորտեղ ե տրված ու փաստաթղթերը տված կազմակերպությունների անունները գրանցվում են անձնական հաշվի քարտերում («նշումների համար» սյունակում):

Կրոնական միավորումների միջոցները, թեև այդ միավորումները չունեն իրավաբանական անձանց իրավունքները, հաշվի յեն առնվում վորպես իրավաբանական անձանց միջոցներ: Նման կարգը սահմանված ե բնակչության ավանդների ավելի ճշգրիտ հաշվառման համար:

Կրոնական միավորումների միջոցներն ի պահ են ընդունվում խնայողամարդկայնորեն, հավատացողների ընկերության կամ խմբի լիազորի անունով:

Ընթացիկ հաշիվ բացելիս՝ կրոնական միավորումից պահանջվում ե ներկայացնել ցուցակագրող մարմնի կողմից վավերացված փաստաթուղթ այն մասին, վոր կրոնական ընկերությունը կամ խումբը, դրամական գործառնություններ կատարելու համար՝ լիազորել ե այն այլալ անձնավորության, վորի անունով մոծվում են դրամները:

Այն դեպքերում, յերբ ազոթաաները լուծարքի յեն-



թարկելիս՝ կրոնական ընկերությունները լուծարքի չեն յենթարկվում, դրամական միջոցները մնում են վերջիններիս տրամադրության տակ՝ պետաշխխնայդրամարկդներում գտնվող ընթացիկ հաշիվներում:

Իրեն՝ կրոնական ընկերության կամ խմբակի լուծարքի յենթարկելու դեպքում, դրամական միջոցները փոխանցվում են պետաշխխնայդրամարկդների պահեստի կապիտալը:

V. ՅԵԿԱՄՈՒՏ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳԾՈՎ

36. Առանձին քաղաքացիների ավանդների և ընթացիկ հաշիվների համար խնայդրամարկդները վճարում են տարեկան 3⁰/o:

37. Իրավաբանական անձանց ավանդների համար խնայդրամարկդները վճարում են՝

ա) կոլանտեսությունների ավանդների համար — 3⁰/o տարեկան:

բ) մնացած կատեգորիաների իրավաբանական անձանց ավանդների համար — 1⁰/o տարեկան:

Կրոնական միավորումների ավանդների համար յեկամուտը վճարվում է իրավաբանական անձանց համար սահմանված դրույքներով (1⁰/o տարեկան):

VI. ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼԻՍ ԿԻՐԱՌՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

38. Ավանդային գործառնությունները ձևակերպելու համար խնայդրամարկդները կիրառում են հետևյալ հիմնական ձևերի փաստաթղթերը՝

ա) խնայողական գրքույկ (ձև № 2) — փաստաթուղթ, վորը տալիս է խնայդրամարկդը ավանդատույի ձեռքը և վորը հաստատում է այն մնացորդը, վորպիսին ավանդատուն իրավունք ունի ստանալու խնայդրամարկդում:

Խնայողական գրքույկները բլանկները հաշվի յեն առնվում վորպես արժեքավոր բլանկներ:

բ) Հաշվարկային գրքույկ (ձև № 5) — ծառայում է ընթացիկ հաշվի մուտքի գործառնությունները խնայդրամարկդի կողմից գրանցելու համար:

գ) Ձեկային գրքույկ (ձև № 6) — պարունակում է բրոշյուրացված 25 չեկերի բլանկներ ճշտորեն լրացված (տես հոդ. 48) և ստորագրված չեկն իրենից ներկայացնում է խնայդրամարկդում ընթացիկ հաշիվ բացած ավանդատույի հրամանը՝ վորոշ գումար վճարելու համար:

Ձեկային գրքույկները հաշվի են առնվում, վորպես խիստ հաշվառման բլանկներ:

դ) Անձնական հաշիվ (ձև № 1) — ծառայում է խնայդրամարկդին՝ յուրաքանչյուր առանձին ավանդատույի — ֆիզիկական անձի ավանդի մնացորդի շարժման հաշվառման համար, նաև ավանդի տոկոսների հաշվառման համար:

Ամեն մի անձնական հաշիվ բացելիս վերահսկիչը պիտի ստորագրի այդ հաշիվը: Անձնական հաշիվները խնայդրամարկդում պահվում են փակվող քարտակալներում, վորոնց բանալիները գտնվում են վերահսկիչի մոտ: Անձնական հաշիվների քարտերը դասավորվում են քարտակալում հաշիվների համարների կարգով և հարյուրական համարներով միմիանցից բաժանվում են միջադիրներով:

Ստորին խնայդրամարկդներից հանձնված և իրեն՝ շրջ(քաղ)խնայդրամարկդի անշարժ ավանդների անձնական հաշիվները, նաև ներկայալսական ավանդների անձնական հաշիվները պահվում են շրջ(քաղ)խնայդրամարկդի գործառնության մասում հատուկ քարտակալներում, վորոնց բանալիները գտնվում են այն անձնավորության մոտ, վորին շրջ(քաղ)խնայդրամարկդի հրամանով իրավունք է տրված թույլ տալու ներկայալսական և անշարժ ավանդների բաց թողնումը (այսինքն՝ միայն շրջ-

խնայդերամարկղի վարիչի, գլխավոր (ավագ) հաշվապահի կամ ավագ վերահսկիչի մոտ)։

Անձնական հաշիվներ բացվում են ամեն մի առանձին ավանդատույի համար։ Միացյալ հաշիվները տարվում են (շրջ(քաղ)խնայդերամարկղների գործառնության մասերում) միայն մանր ավանդների համար (ֆիզիկական անձանց համար 5 ուրբ+ պակաս, իսկ իրավաբանականի համար — 25 ուրբ+ պակաս)՝ վորոնք պայմանականորեն փակված հաշիվներից փոխադրվել են միացյալ հաշիվների։ Պայմանականորեն փակված այն հաշիվների ցուցակները, վորոնց ավանդները փոխանցվել են միացյալ հաշիվին, պահվում են յուրաքանչյուր խնայդերամարկղի համար առանձին գործում (շրջխնայդերամարկղի վարիչի, գլխավոր հաշվապահի կամ ավագ վերահսկիչի պատասխանատվությամբ)։ Վորեն այլ միացյալ հաշիվներ պահելը խնայդերամարկղներում, արգելվում է։

յ) № 1 — յուր ձևի անձնական հաշիվները կիրառվում են իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվների համար։ Այդ հաշիվները տարվում են յերկու որինակից, վորոնցից մեկն ուղարկվում է ավանդատույին՝ թերթը լրանալուց, նաև տարին վերջանալուց հետո։

զ) Գործառնության որագրեր, վորի մեջ տարվում է որվա ընթացքում խնայդերամարկղի կողմից կատարվող բոլոր գործառնությունների հերթական գրանցումը։

ե) Որդերներ, վորոնք դուրս են գրվում ամեն մի առանձին ավանդային գործառնության համար։ Ավանդը առանձին ավանդային գործառնության համար։ Ավանդը կանխիկ դրամով մուծելու և ստանալու գործառնությունների ժամանակ՝ ոգտագործվում են № 51 ձևի որդերներ։ Ավանդների հաշվային շրջանառությունների ժամանակ (հաշվեգրում և դուրսգրում) դուրս է գրվում ավանդի հաշիվին կատարվող գործառնության որդեր և միաժամանակ № 52 ձևի տեղեկանք հետագա հաշիվում թյան համար։

ը) Հսկիչ թերթ (կանաչ գույնի), վորը տրվում է ներկայչական ավանդ մուծող ավանդատույին խնայդերքույկի հետ միասին։ Հսկիչ թերթերը հաշվի յեն առնվում յորպես արժեքավոր բանկներ։

թ) Այբուբենական քարա № 13 ձևի — տվյալ ավանդատույի հաշվի համարի մասին տեղեկանալու համար։ Այբուբենական քարերը տեղավորվում են փակվող հատուկ քարտակալում, այբուբենական կարգով (ըստ աղ-գանուկների, իսկ նույնանման աղգանուկների դեպքում — այբուբենական կարգով՝ ըստ անունների)։

39. Յուրաքանչյուր խնայդերամարկղ բոլոր հաշիվները համարակալում է հերթական համարներով, սկսելով № 1-ից։ Ընդամին՝ սահմանվում է առանձին-առանձին համարակալում ֆիզիկական անձանց ավանդների և իրավաբանական անձանց ավանդների համար։ Առանձին համարակալում է սահմանվում ներկայչական ավանդների համար։

Հաշվի համարը նշվում է ավանդային գործառնության բոլոր փաստաթղթերի վրա՝ խնայողական կամ հաշվարկային գրքույկի վրա անձնական հաշվի քարտի վրա, գործառնության որագրում, որդերների և չեկերի վրա։

Հաշիվների համարակալումը պիտի լինի խիստ հետև-վողական։ Միատեսակ համարներ (լիտերներով, նշան-ներով և այլն) չեն թույլատրվում։ Փակված հաշիվների համարները չեն վերականգնվում և հանձնվում ուրիշ հաշիվներին։

Յերկու խնայդերամարկղների ձուլվելու դեպքում՝ նրանցից մեկի հաշիվների համարակալումը պիտի փոփոխվի, բայց միմիայն այն չափով, վորքան վոր ավանդատուները ներկայանում են խնայդերամարկղին։

40. Ժամկետային և պայմանական ավանդների բոլոր փաստաթղթերի վրա, առանց բացառության, գրվում

ե շտամպ ավանդի տեսակի անուանով (որինակ՝ «Ժամկետա-
յին», «պայմանական»):

Բոլոր փաստաթղթերի վրա, բացի հաշվի համարից, նշվում է նաև այն խնայդրամարկղի համարն ու անունը, փորտեղ պահվում է հաշիվը (կոտորակով՝ գծի վրա — շրջ (քաղ)խնայդրամարկղի համարը, գծի տակ — ստորին խնայդրամարկղի համարը):

Ավանդատույին տրվող փաստաթղթերի վրա, բացի դրանից, պիտի մատնանշված լինի խնայդրամարկղի հասցեն:

VII. ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

41. Սկզբնական մուծումն ընդունելը — Տվյալ ավանդատույի համար հաշիվ բացելիս փորպես ավանդ մուծ-
վող գումարը կոչվում է սկզբնական մուծում: Սկզբնա-
կան մուծումներն ընդունվում են ֆիզիկական անձերից
5 ուղղությամբ փոխ պակաս գումարներով: Հետագա մուծում-
ները կոչվում են լրացուցիչ: Սկզբնական մուծումը ձևա-
կերպվում է հետևյալ ձևով՝

Վերահսկիչը՝

ա) առաջարկում է մուծողին այբուբենական քա-
րում գրել ազգանունն, անունը և հայրանունը: Անձնա-
կան հաշվի հերթական համարը գրում է այբուբենական
քարում: Յեթե մուծողն անգրագետ է, այբուբենական
քարը լրացնում է վերահսկիչը: Ներկայադական ավանդ
մուծելիս այբուբենական քարը չի լրացվում:

բ) Կազմում է № 51 ձևի մուտքի որդեր՝ նշելով
ներանում ավանդատույի հաշվի համարը, ազգանունն,
անունը և հայրանունը, մուծման գումարը, տարին,
ամիսը, օրը, ավանդի մնացորդն ու տոկոսները: Որդերի
վրա դնում է խնայդրամարկղի շտամպը: Առաջարկում է
ավանդատույին կամ մուծողին տալ իր ստորագրութ-
յան նմուշը որդերի վրա: Յեթե սկզբնական մուծումը անում

է փոչ ինքն ավանդատուն, ապա որդերի վրա ստորա-
գրության առաջ նշում է՝ «մուծող»:

գ) Անձնական հաշվի քարում գրում է այդ հաշվի
հերթական համարը և ստորագրում է քարտի վերին
մասում («վերահսկիչ» բառի դիմաց): Լրացնում է հե-
տևյալ սյունակները՝ ավանդատույի ազգանունն, անունը
և հայրանունը, ավանդատույի հասցեն, նրա տարիքը և
զբաղմունքը:

դ) Առաջարկում է ավանդատույին ստորագրել անձ-
նական հաշվի քարտի «ստորագրության նմուշը» սյու-
նակում: Յեթե ավանդատուն անգրագետ է, վերահսկիչն
անձնական հաշվի քարում նշում է՝ «անգրագետ է» և
քարում («նշումների համար» սյունակում) գրանց-
վում է անցագրային փաստաթղթի համարն ու անունը
(տես հոդ. 23), փորը պիտի ավանդատուն ներկայացնի
խնայդրամարկղին հետագա գործառնությունների ժա-
մանակ խնայդրքույի հետ միասին:

ե) Յեթե ավանդ մուծողն ավանդատու չի հան-
դիսանում, անձնական հաշվի քարտի «գործառնություն»
սյունակում և մուտքի որդերում նշում է — «ավանդը
մուծված է այսինչի կողմից»: Ավանդատույի ստորագրու-
թյան նմուշը վերցվում է այն ժամանակ, հենց փոր նա
ներկայանում է խնայդրամարկղին (անձնական հաշվի և
թղթի առանձին թերթի վրա, հետևյալ վերնագրով՝
«№ ... հաշվի ավանդատույի ստորագրության նմուշ
հետագա հսկողության համար»): Ստորագրության այդ
նմուշը վերահսկիչն ստուգում է անցագրի կամ անցա-
գրի փոխարինող փաստաթղթի հետ (տես հոդ. 23):
Գիրը փոխարինող փաստաթղթի համարը և անունը նշվում
են անձնական հաշվի քարտի «նշումների համար» սյու-
նակում և հետագա հսկողությանն ուղարկվող թերթի
հակադիր յերեսին:

զ) Ավանդը ներկայադական մուծելիս՝ անձնական հաշ-

վի քարտում ազգանվան փոխարեն գրում ե «ներկայա-
կան» (на пред'явителя), վոչ մի տեղեկութուններ
ավանդատույից չի վերցնում և ստորագրութուն չի
պահանջում:

ե) Անձնական հաշվի քարտում գրում ե տարին,
ամիսը, որը, մուծման գումարը և այդ նույն գումարը
«մնացորդ» սյունակում և մուծման գումարի համար հաշ-
վում ե տոկոսներ մինչև տարվա վերջը, գրանցելով այդ
հաշված տոկոսները «հաշված ե» և «մնացորդ» սյու-
նակներում:

ը) պատրաստում ե խնայգրքույկը՝ գրանցում ե նրա-
նում խնայգրամարկղի համարը և անունը, ավանդատույի
անունը, հայրանունը, ազգանունը և անձնական հաշվի
համարը՝ խնայգրքույկի բոլոր եջերում: գրանցում ե խնայ-
գրքույկում տարին, ամիսը, որը, մուծման գումարը թվա-
նշաններով, ավանդի մնացորդը բառերով և ստորագրում ե
գործառնության գրանցումը և խնայգրքույկի վերնաեջը:

թ) յեթե ավանդը ներկայական ե մուծված, լրաց-
նում ե հսկիչ թերթը խնայգրքույկի համար: Հսկիչ թեր-
թում նշում ե խնայգրամարկղի համարը և անունը, հաշ-
վի համարը, թերթը հանձնելու ժամանակը և կտրում ե
թերթի թվանշաններն այնպես, վորպեսզի թերթում մնա-
ցած թվանշանները համապատասխանեն հաշվի ավանդի
մնացորդին: Հսկիչ թերթի վերին աջ անկյունում
գնում ե շտամպ կամ գրում ե ձեռքով «ներկայական
ավանդ»: Հսկիչ թերթի արմատում նշում ե տարին,
ամիսը, որը, հաշվի համարը, ընդունված գումարը և այդ
նույն գումարը գրանցում ե «ավանդի մնացորդը» սյու-
նակում:

Հսկիչ թերթի համարը գրանցում ե խնայգրքույ-

կում և անձնական հաշվի քարտում («գործառնութուն»
սյունակում), նաև մուտքի որդերում:

ժ) գրանցում ե գործառնության որագրում հաշվի
համարը, ավանդատույի ազգանունը (ներկայական
ավանդին՝ «ներկայական» բառը), մուծման գումարը,
խսկ ներկայական ավանդին՝ և հսկիչ թերթի համարը:

ի) Խնայգրքույկն որդերի հետ միասին, իսկ ներ-
կայական ավանդին՝ և հսկիչ թերթի հետ միասին ան-
միջականորեն (վոչ ավանդատույի միջոցով) հանձնում ե
գանձապահին:

Ներկայական խնայգրքույկը և հսկիչ թերթը հանձ-
նելիս՝ վերահսկիչը նախազգուշացնում ե ավանդատույին,
վոր ավանդային փաստաթուղթը (խնայգրքույկը, նրա
հսկիչ թերթը կամ յերկուսը միասին) կորցնելու դեպքում՝
այդ փաստաթուղթը խնայգրամարկղին ներկայացնող
ամեն մի մարդ կարող ե ստանալ ավանդը և վոր այդ
կորուստի ժամանակ ավանդատուն իր իրավունքն ավանդի
համար կարող ե վերականգնել միայն դատարանի միջո-
ցով:

Ավանդատույին գանձապահի կողմից կանչելու հա-
մար (խոշոր խնայգրամարկղներում) համարով ժետոն
ե տալիս ավանդատույին (թիթեղյա կամ թղթե) նշանա-
կելով այդ համարը որդերի վրա:

լ) Այբուբենական քարտը գնում ե այբուբենական
քարտակալում, իսկ անձնական հաշվի քարտը — անձնա-
կան հաշիվների քարտակալում:

Գանձապահը՝

ա) Որդերում մատնանշված ժետոնի համարով կան-
չում ե ավանդատույին,

բ) Վերահսկիչ կողմից նրան հանձնված փաստաթղթ-
թերթով պարզում ե մուծման գումարը, համեմատում ե

խնայգրքույկի (խսկ ներկաչական ավանդինը՝ նաև հսկիչ թերթի) գրանցումները որդերի գրանցումների հետ:

դ) Ավանդատույից (մուծողից) ընդունում է գրամը:

զ) Ստորագրում է գրքույկը և որդերը (խսկ ներկայ-
չական ավանդինը՝ և հսկիչ թերթը):

յե) Որդերը թողնում է իր մոտ, խնայգրքույկը (խսկ ներկաչական ավանդինը՝ և հսկիչ թերթը) հանձ-
նում է ավանդը մուծած անձնավորության:

42+ Լրացուցիչ մուծումներ ընդունելը:

Լրացուցիչ մուծումներն ընդունում է ավանդային
փաստաթուղթ աված խնայգրամարկղը: Այդ գրամարկղը
լրացուցիչ մուծումները կարող է ընդունել և առանց
խնայգրքույկը ներկայացնելու:

Լրացուցիչ մուծումներ կարող են արվել և ցանկա-
ցած ուրիշ խնայգրամարկղում, բայց խնայգրքույկի ներ-
կայացնելն այդ ժամանակ պարտադիր է: Կատարված
գործառնությունը գրանցվում է խնայգրքույկում, ըն-
դունված լրացուցիչ մուծումն առանց կոմիսիա գան-
ձելու փոխադրվում է № 10 ձևով կամ № 10-ա ձևով
այն խնայգրամարկղը, վորը ավել է ավանդային փա-
ստաթուղթը (տես փոխադրումների և ակկրեդիտիվային
գործառնությունների հրահանգը, հրատ. 1935 թ.):

Կանխիկ գրամների փոխադրումներն ավանդներում
հաշվեդրելը կատարվում է փոխադրումների և ակկրե-
դիտիվային գործառնությունների հրահանգում մատնա-
նշված հիմունքներով (1935 թ. հրատ.):

Տվյալ ավանդատույի անձնական հաշիվը պահող
խնայգրամարկղը լրացուցիչ մուծումները ձևակերպում է
հետևյալ կարգով:

Վերահսկիչը՝

ա) ընդունում է ավանդատույից խնայգրքույկն

ու լրացրած որդերը (կամ ինքն և լրացնում այդ, յեթե
ավանդատուն անգրագետ է), քարտակալից հանում է
այդ ավանդատույի անձնական հաշիվը, համեմատում է
հաշվի համարը, ավանդատույի ազգանունն, անունը և
հայրանունը և ավանդի մնացորդի նուշնությունը՝ խնայ-
գրքույկում և անձնական հաշվում: Խնայգրքույկում և
անձնական հաշվի քարտում յեզած ավանդի մնացորդի
տարբերությունը գեպքում՝ վերահսկիչը գործառնության
որագրով ստուգում է տարբերություն պատճառը և սու-
ղումից հետո գրանցում է խնայգրքույկում նրանում
չգրանցված գործառնությունները:

բ) Գրանցում է խնայգրքույկում տարին, ամիսը,
օրը, գործառնությունը բովանդակությունը («ընդունված
է»), մուծման գումարը թվանշաններով, ավանդի մնա-
ցորդը թվանշաններով և բառերով, ստորագրում է գրան-
ցումը: Անձնական հաշվի քարտում գրանցում է տարին,
ամիսը, օրը, գործառնություն անունը, մուծման գումարը
և ավանդի մնացորդը թվանշաններով, հաշվում է մուծված
գումարի տոկոսները, գրանցում է այդ գումարը և տոկոսնե-
րի մնացորդն անձնական հաշվում: Համեմատում է անձնա-
կան հաշվում և խնայգրքույկում յեզած ավանդի նոր
մնացորդը: Գրանցում է որդերում ավանդի և տոկոսների
մնացորդը և ստորագրում է այդ որդերը: Գրանցում է
գործառնություն որագրում հաշվի համարը, ավանդատույի
ազգանունը և ընդունված գումարը: Փետոն է տալիս
ավանդատույին, նշելով որդերում այդ ժետոնի համարը:
Անձնական հաշվի քարտը դնում է քարտակալում:

գ) ներկայչական ավանդի գծով, բացի գրանից, ըն-
դունում է ավանդատույից հսկիչ թերթը խնայգրքույկի
հետ միասին և հսկիչ թերթի հաշվի համարը և ավանդի

Մնացորդը համեմատում ե խնայգրքույկի և անձնական հաշվի քարտի, հաշվի համարի և ավանդի մնացորդի հետ, նաև ստուգում ե ներկայացրած թերթի համարը անձնական հաշվի գրանցումով: Մարում ե ներկայացրած հսկիչ թերթը մակագրելով՝ «մարված ե այսինչ օրը, ամսին, տարեթվին» և իր ստորագրությամբ ամրացնում ե այդ հսկիչ թերթը օրգերին: Ձևակերպում ե նոր հսկիչ թերթ, նշելով նրանում խնայդրամարկդի համարը և անունը, հաշվի համարը, թերթը տալու օրը, ամիսը, տարին և կարելով թողնում ե գործառնությունից հետո մնացած ավանդի մնացորդի գումարի չափով թվանշաններ: Հսկիչ թերթի արմատում նշում ե օրը, ամիսը, տարին, հաշվի համարը, ընդունված գումարը և այդ նույն գումարը գրանցում ե «ավանդի մնացորդ» սյունակում:

Հսկիչ թերթի վերին աջ անկյունում նշում ե «ներկայական ավանդ»: Հսկիչ թերթի համարը գրանցում ե խնայգրքույկում, անձնական հաշվում («գործառնության» սյունակում) և մուտքի օրգերում:

դ) Յեթե մուծողը խնայգրքույկ չի ներկայացնում, դուրս ե գրում № 31 ձևի անդորրագիր՝ պատճենագրով (անդորրագիրը տրվում է մուծողին, իսկ նրա պատճեն մնում ե անդորրագրային գրքույկում): Անդորրագրում նշում ե ավանդատույի ազգանունն, անունը, և հայրանունը, հաշվի համարը, մուծման գումարը և—մուծողի ցանկությամբ—նրա ազգանունը: Միաժամանակ կադմում ե № 51 ձևի օրգեր, իսկ անձնական հաշվում նշում ե, վոր մուծումն ընդունված ե № 31 ձևի անդորրագրով: Այդպիսի մուծումը գրանցում ե խնայգրքույկում հենց վոր խնայգրքույկը ներկայացվում ե, անձնական հաշվի գրանցումները անդորրագրի պատճենի և գործառնության օրագրի հետ նախապես համեմատելուց հետո:

յե) հանձնում ե գանձապահին խնայգրքույկը, օր-

գերը, իսկ ներկայական ավանդինը՝ նաև հսկիչ թերթերը (հինը և նորը):

Փանձապահը՝

Համեմատում ե մուծման գումարը և ավանդի մնացորդը խնայգրքույկով և օրգերով (իսկ ներկայական ավանդներինը՝ նաև հսկիչ թերթերով) կանչում ե ավանդատույին, դրամն ընդունում ե նրանից, ստորագրում ե խնայգրքույկը (օրգերը և հսկիչ թերթերը) և խնայգրքույկը հանձնում ե ավանդատույին (ներկայական ավանդինը՝ նաև նոր հսկիչ թերթը):

43. Ավանդի մի մասը տալը: Ավանդը խնայգրքույկով տալիս ե (մասնակի կամ լիովին) միայն այն խնայդրամարկդը, վորը պահում ե ավանդատույի անձնական հաշիվը և բացառիկ դեպքերում, շրջխնայդրամարկդի վարիչի թույլտվությամբ, նայե այն շրջանային խնայդրամարկդը, վորն իրագործում ե այդ հաշվի հետագա հսկողությունը: Այդ բոլոր դեպքերում՝ խնայգրքույկի ներկայացնելը խնայդրամարկդին ավանդն ստանալու ժամանակ, պարտադիր ե:

500 ռուբլուց բարձր ավանդ կամ նրա մի մասը տրվում ե միայն վարիչի կամ այն անձի թույլտվությամբ, վորի վրա խնայդրամարկդի հրամանով դրված ե նման գումարներ տալու թույլտվությունը:

Ամեն անգամ ավանդը տալուց հետո, ֆիզիկական անձի հաշվում ավանդի մնացորդը 5 ռուբլուց պակաս չպիտի լինի:

Շրջ(քաղ)խնայդրամարկդի գործառնության մասում առանձին պահվող ներկայական ավանդներն՝ անկախ իրենց գումարից և անշարժ ավանդները (5 ռուբլ. բարձր) տրվում են շրջ(քաղ) խնայդրամարկդի վարիչի, գլխավոր

(ավագ) հաշվադատին կամ ավագ վերահսկչի թույլտվությամբ: Ներկայական և անշարժ ավանդներ տալը թույլատրելու իրավունք ունեցող անձանց ազդանունները հայտարարվում են շրջ(քաղ)խնայգրամարկղի հրամանում:

Խնայգրքույկը և յեղքի № 51 ձևի լրացրած որդերը (իսկ ներկայական ավանդին՝ նաև հսկիչ թերթը) ստացողից ընդունելով՝ վերահսկիչը՝

ա) հանում է քարտակալից անձնական հաշվի քարտը, համեմատում է խնայգրքույկն ունեցող ավանդատույի հաշվի համարը, ազդանունն, անունը և հայրանունն անձնական հաշվի քարտի տվյալների հետ:

բ) համեմատում է որդերի վրա յեղած ավանդատույի ստորագրությունն անձնական հաշվի քարտի վրա յեղած ստորագրության նմուշի հետ: Յեթե ավանդատուն անգրագետ է, անձնական հաշվի վրա յեղած նշումներով և ներկայացրած անցագրային փաստաթղթերով ստուգում է ստացողի՝ ավանդը տնօրինելու իրավունքը: Լրացնում է № 51 ձևի որդերը, նրա վրա անում է «անգրագետ» նշումը և ներկայացրած փաստաթղթի համարն ու անունը գրանցում է որդերում: Յեթե ավանդը տըրվում է հավատարմագրով, վերահսկիչը № 51 ձևի որդերի հակադիր յերեսին նշում է, վոր ստացողի ստորագրությունը համեմատված է հավատարմագրում յեղած հավատարմատարի ստորագրության նմուշի հետ և գրանցում է ներկայացրած անցագրային փաստաթղթի համարը և թեով և յերբ է տվել այդ փաստաթուղթը:

Ներկայական ավանդն ստանալու համար ստորագրություն չի վերցնում, այլ հսկիչ թերթի համարն ստուգում է անձնական հաշվի գրանցման հետ:

գ) Համեմատում է խնայգրքույկում յեղած ավանդի մնացորդն անձնական հաշվի քարտի մնացորդի հետ (իսկ ներկայական ավանդին — և հսկիչ թերթի մնացորդի

հետ): Խնայգրքույկում յեղած ավանդի մնացորդի և անձնական հաշվի քարտի մնացորդի տարբերության դեպքում՝ վերահսկիչը տարբերության պատճառը պարզում է գործառնություն ունեցող և խնայգրքույկում չգրանցված գործառնությունները գրանցում է նրանում ստուգումից հետո:

դ) Գրանցում է խնայգրքույկում գումարը տալու որը, ամիսը, տարին, գործառնություն բովանդակությունը («տրված է»), տրվող գումարը թվանշաններով, ավանդի մնացորդը թվանշաններով և բառերով և ստորագրում է գրանցումը: Անձնական հաշվի քարտում նշում է գործառնության ժամանակը, նրա բովանդակությունը, տրվող գումարը և ավանդի մնացորդը թվանշաններով, հաշվում է տրված գումարի տոկոսները, նշելով այդպիսիք անձնական հաշվում և դուրս է բերում տոկոսների նոր մնացորդը, որդերում նշում է ավանդի և տոկոսների մնացորդը, ժետոնի համարը և ստորագրում է որդերը: Ներկայական ավանդին՝ բացի գրանից, մարում է հին հսկիչ թերթը և դուրս է գրում նոր հսկիչ թերթ: Գործառնության որագրում գրանցում է հաշվի համարը, ավանդատույի անգանունը և տրված գումարը:

յե) Խնայգրքույկը որդերի հետ միասին, իսկ ներկայական ավանդի ժամանակ՝ նաև հին և նոր հսկիչ թերթերի հետ հանձնում է զանձադահլին և ժետոն է տալիս ավանդատույին:

Գանձադահլը համեմատում է որդերի և խնայգրքույկի գրանցումները (իսկ ներկայական ավանդի ժամանակ՝ և հսկիչ թերթերին), ստորագրում է այդ փաստաթղթերը և դրամը տալիս է ավանդատույին, առաջարկելով նրան, առանց դրամարկղից հեռանալու ստուգել ոտացած գումարի ճշտությունը և գործառնությունների գրանցման

ճշտությունը խնայգրքույկում (ներկայական ավանդի ժամանակ՝ և հսկիչ թերթը):

44+ Ամբողջ ավանդի տալը:

Վերահսկիչը՝

ա) համեմատում է խնայգրքույկի և անձնական հաշվի քարտի գրանցումները, իսկ ներկայական ավանդին՝ և հսկիչ թերթում այնպես, ինչպես ավանդի մի մասը տալու ժամանակ:

բ) Վերջնական հաշվարկում է անում անձնական հաշվի քարտում, այսինքն՝ հանում է տոկոսները մինչև տարվա վերջը, դուրս է բերում տոկոսների նոր մնացորդը, այդ մնացորդը գրանցում է «ընդունված է կամ հաշվեգրված» սյունակում, նշելով «գործառնություն» սյունակում «բարդված են տոկոսներ» բառերը, տոկոսները միացնում է ավանդի գումարին և դուրս է բերում ավանդի նոր մնացորդ: Դրանից հետո անձնական հաշվի քարտում գրանցում է ավանդի ամբողջ գումարը տալու գործառնությունը: Փակում է հաշիվը, գրելով նրա վրա՝ «հաշիվը փակված է», ստորագրում է այդ գրությունը և քարտը գնում է իր տեղը (գործող հաշիվների քարտակալում, ուր նա պահվում է մինչև տարվա վերջը):

գ) Լրացնում է № 52 ձևի մուտքի որդեր՝ միացված տոկոսների գումարով, միաժամանակ գրանցելով այդպիսիք խնայգրքույկի «ընդունված է» սյունակի առաջին ազատ տողում «բարդված են տոկոսներ» բովանդակությամբ:

դ) Առաջարկում է ավանդատույին՝ № 51 ձևի յեղքի որդերում գրել ավանդի հաշված գումարը (միացված տոկոսներով) և ստորագրել այդ գումարն ստանալու համար (յեթե ավանդը ներկայական է): Ստուգում է ավանդը տնօրինելու իրավունքը, համեմատում է որդերի և հաշվի

ստորագրությունները, իսկ յեթե ավանդատուն անգրագետ է, պահանջում է ներկայացնել անցագրային փատատութիւն: Տրվող գումարը գրանցում է խնայգրքույկի «արված է» սյունակի հերթական ազատ տողում, նշելով «գործառնություն» սյունակում՝ «արված է ամբողջ ավանդը»:

յե) Մարում է խնայգրքույկը (իսկ ներկայական ավանդին՝ և հսկիչ թերթը), մակագրելով նրա վրա (կամ շտամպ դնելով) «հաշիվը փակված է» և ձեռնով այդ գրքույկը վերևից ու ներքևից:

զ) Գրանցում է գործառնության որագրում հաշվի համարը, ավանդատույի ազգանունը, միացված տոկոսների գումարն առանձին՝ «հաշվային շրջանառություններ» սյունակում («հաշվեգրված է» յենթասյունակ) և արվող գումարն առանձին՝ «կանխիկ» սյունակում («արված է» յենթասյունակ):

է) Հանձնում է գանձապահին յեղքի որդերը և խնայգրքույկը (իսկ ներկայական ավանդին՝ և հսկիչ թերթը), թողնելով իր մոտ տոկոսների մուտքի որդերը մինչև որվա վերջը:

ը) Սյրուբենական քարտը հանում է այրուբենական քարտակալից և այն գետեղում է այրուբենական քարտակալի արխիվային մասում:

Գանձապահն ամբողջ ավանդը հանձնելիս՝ վարվում է հենց այնպես, ինչպես ավանդի մի մասը տալու ժամանակ, բայց խնայգրքույկը (իսկ ներկայական ավանդին՝ և հսկիչ թերթը) չի հանձնում, այլ թողնում է իր մոտ մինչև որվա վերջը:

Շրջ(քաղ) խնայգրամարկդի գործառնության մասում միացյալ հաշվին փոխադրված 5 ռուբլուց պակաս ավանդները խնայգրամարկդը տալիս է միայն լիովին՝ խնայ-

գրքույկի ավանդի մնացորդը միացյալ հաշվին անցած ավանդների ցուցակում նշված մնացորդի հետ համեմատելուց հետո (ավանդը տալու մասին այդ ցուցակում նշումն է արվում վերահսկչի ստորագրությամբ): Յեթե ավանդատունը ցանկանում է այդ ավանդն ավելացնել լրացուցիչ մուծումով, ապա նրա համար բացվում է նոր հաշիվ:

45. Ավանդների տալը համաձայն հետագա հսկողության տվյալների:

Ֆիզիկական անձանց ավանդները բացառիկ դեպքերում կարող են արվել խնայողություններով շրջ(քաղ)-խնայողության փաթեթի թույլտվությամբ՝ բացի այն խնայողության փաթեթից, վորը պահում է ավանդատուների անձնական հաշիվները, նաև այն շրջանային խնայողության կղմի կողմից, վորն իրագործում է այդ հաշիվների գործառնությունների հետագա հսկողությունը (նման կարգը չի տարածվում ընթացքիկ հաշիվների վրա): Հետագա հսկողության տվյալներով արվող գումարը տվյալ ավանդատույի վերջին յերեք ամիսների ընթացքում յեղած ավանդի ամենափոքր մնացորդից ավելի չպիտի լինի:

Խնայողության փաթեթի վերահսկիչը վերցնելով ավանդատույի ստորագրությունը ձև Ձ 51 յեղքի որդերի վրա, խնայողությունը որդերի հետ միասին ուղարկում է հետագա հսկողության: Վերջինիս պատասխանատու աշխատակիցը համեմատելով խնայողությունիկ ավանդի մնացորդը հետագա հսկողության քարտակալում՝ գտնվող վերջին որդերում նշված մնացորդի հետ, նաև՝ ավանդատույի ստորագրությունն առանձին որդերի ստորագրության նմուշի հետ, ավանդի տալը թույլատրում է ստորագրելով յեղքի որդերը: Դրանից հետո հետագա հսկողության աշխատակիցը որդերը և խնայողությունիկ վերագրանում է

վերահսկիչին, վորը կատարում է ավանդը տալու գործառնությունը:

Տրված գումարը շրջ(քաղ)խնայողության փաթեթի գործառնության մասի վերահսկիչն անց է կացնում գործառնության որագրում՝ «յեղք կանխիկով» սյունակի «այլք» յենթասյունակում: Դրա հետ միաժամանակ վերահսկիչը պատճենագրով կազմում է յերեք որինակից Ձ 59 ձևի («Ա», «Բ», «Վ») որդերների կոմպլեքտ: Այդ կոմպլեկտի բոլոր որդերներում վերահսկիչը լրացնում է վերևի մասը, իսկ ներքևի մասը լրացվում է միայն «Ա» և «Բ» որդերներում:

«Ա» որդերը որվա հաշվետվության հետ ուղարկվում է հաշվապահության, իսկ «Վ» որդերը հետագա հսկողության:

«Բ» որդերը Ձ 51 ձևի որդերի հետ միասին ուղարկվում է հաշվետու գրամարկիչին: Անձնական հաշիվը պահող խնայողության փաթեթի ստանալով «Բ» որդերը և Ձ 51 ձևի որդերը, գործառնությունները վերանցում է անձնական հաշվում և գործառնության որագրի «գուրա է գըրված ավանդներից» սյունակում և ձև «Բ» որդերում նշում է գուրա գրելու մասին, իսկ Ձ 51 ձևի որդերում գրում է ավանդի և տոկոսների մնացորդը և որդերներն որվա հաշվետվության հետ միասին ուղարկում է շրջխնայողության փաթեթի:

46. Ուրիշ (վոչ հաշվետու) խնայողության փաթեթի խնայողություններով գումարներ տալը չի թույլատրվում:

47. հաշվային շրջանառություններ ավանդների գծով: Ավանդը նույն գրամարկիչում յեղած մի այլ անձնական հաշվին փոխանցելու մասին ավանդատուից դիմում լինելու դեպքում (գրավոր), վերահսկիչը՝

ա) անձնական հաշվի քարտում, վորից կատարվում

և փոխանցումը, գրանցում և յեղքի գործառնությունը՝ նշելով՝ «փոխանցված և № . . . հաշվին»:

բ) անձնական հաշվի քարտում, փոքրին տրվում և փոխանցումը, գրանցում և մուտքի գործառնությունը՝ նշելով՝ «փոխանցված և № . . . հաշվին»:

գ) այն դեպքում, յեթե փոխանցումից հետո հաշիվը փակվում և, գործառնությունը գրանցելուց հետո խնայ-գրքույկը մարում և ինչպես ամբողջ ավանդը տալու ժամանակ, իսկ այն անձի գրքույկում, փոքրին տրվում փոխանցվում և ավանդը, այդպիսին ներկայացնելիս՝ գրանցում և փոխանցվող ավանդի մնացորդը (ներառյալ բարդված տոկոսները):

Հաշվից դուրս գրված գումարով կազմում և № 52 ձևի յեղքի տեղեկանք, իսկ մյուս հաշվին հաշվեգրված գումարով կազմում և № 52 ձևի մուտքի տեղեկանք:

դ) փոխանցումը գրանցում և գործառնությունն որագրում հաշվային շրջանառությունով «հաշվեգրված և» և «դուրս և գրված» յենթապունակներում:

Մի հաշվից մյուսին արվող բոլոր փոխանցումները խնայգրամարկը կատարում և միայն խնայգրքույկն այն ավանդատույի կողմից ներկայացնելու ժամանակ, փոքրի հաշվից դուրս և գրվում փոխանցվող գումարը: Այդ կանոնը չի վերաբերում այն քաղաքների խնայգրամարկներում գտնվող իրավաբանական անձանց հաշիվներին արվող փոխանցումներին, փորակելով ժիրոգործառնություններ են անցկացված (տես ժիրոգործառնությունների հրահանգը):

Կապի հիմնարկություններից ստացվող դրամային փոխադրումներն ավանդներում հաշվեգրելու կարգը սահմանվում և ՊԱՆԴ-ի և ՊՎ Ի Գլխավոր Վարչության ու կապի ժի-ի համատեղ ցուցմունքներով (տես փոխադրումներին և ակկրեդիտիվներին գործառնությունների 1935 թ. հրապարակած հրահանգի հավելվածը):

Պետական բանկի հիմնարկություններից գումարներ ավանդներում հաշվեգրելու համար հիմք են հանդիսանում պետական բանկի կողմից խնայգրամարկներին տրված հանձնարարությունները:

Կապի կամ պետական բանկի հիմնարկություններից փոխված գումարներ ֆիզիկական անձանց ավանդներին փոխանցելը խնայգրամարկները կարող են կատարել միայն այն դեպքում, յեթե ավանդատուն այդ մասին գրավոր հայտարարություն և տվել պետական բանկի հիմնարկության կամ կապի հիմնարկության:

Աշխատավարձը (ինչպես ցուցակներով, նույնպես և բանվորների և ծառայողների դիմումներով) և կոլտնտեսությունների կողմից կոլտնտեսականների մեջ բաշխվող յեկամուսները ֆիզիկական անձանց ավանդներին փոխանցելը կտրականապես արգելվում և:

Ներկայական ավանդների գծով հաշվային շրջանառություններ կատարելն արգելվում և:

Այն դեպքերում, յերբ հաշվային շրջանառությունով սկզբնական մուծումն և ստացվում անվանական հաշվի համար, խնայգրամարկը պիտի խնայգրքույկը դուրս գրի միայն ավանդատույի ներկայանալու ժամանակ: Ընդամենն՝ ավանդատույի կողմից ներկայացրած փաստաթղթի համարը պիտի նշվի անձնական հաշվի հերթական որդերի վրա: Ավանդատուն խնայգրքույկն ստանալու համար ստացական և տալիս անանձին թղթով: Այդ ստացականը կցվում և որպա փաստաթղթերին:

48* Ընթացիկ հաշիվներին գործառնություններին տեխնիկայի առանձնահատկությունները:

Ընթացիկ հաշիվների գործառնություններին տեխնիկական տարբերվում և ավանդային հաշիվների գործառնությունների տեխնիկայից հետևյալ առանձնահատկություններով՝

ա) ընթացիկ հաշիվ բացելիս՝ տրվում են հաշվարկային և չեկային գրքույկներ: Չեկային գրքույկը տրվում է 30 կոպեկ վճարով: Յեթե ֆիզիկական անձի ընթացիկ հաշվի սկզբնական մուծումն անում է վոչ ինքն ավանդատուն, այլ մի ուրիշը, վերջինիս տրվում է միայն հաշվարկային գրքույկ, չեկային գրքույկն այդ դեպքում կարող է տրվել միայն ավանդատույի հավատարմագիրը ներկայացնելու ժամանակ:

Հաշվարկային գրքույկը տալիս՝ վերահսկիչը լրացնում է նրա շապիկը և առաջին յերեսը: Մուծման գումարը գրքույկում գրվում է բառերով և թվանշաններով և ստորագրվում է վերահսկչի և գանձապահի կողմից:

Չեկային գրքույկ տալիս՝ յուրաքանչյուր չեկի վրա մատնանշվում է՝ հաշվի համարը, դրամարկղի անունն ու համարը, ազգանունն, անունը և հայրանունը (իրավաբանական անձի լրիվ անվանումը):

Տրված չեկի համարները գրանցվում են անձնական հաշվի քարտում և նշվում են հետագա հսկողութային ուղարկվող օրգերում: Չեկային գրքույկն ստացողը ստորագրում է անձնական հաշվի քարտում:

բ) Ընթացիկ հաշիվներ իրավաբանական անձանց անունով բացվում են միայն այն դեպքում, յերբ ընթացիկ հաշիվ բանալու համար իրավաբանական անձը խնայդրամարկղին միաժամանակ ներկայացնում է գրավոր պահանջ՝ յերկու օրինակից, կնիքի նմուշը և չեկեր ստորագրելու լիազորություն ունեցող անձանց ստորագրություններին նմուշները (առանձին բլանկի վրա, յերկու օրինակից, վորոնցից մեկը հանձնվում է հետագա հսկողութային): Պահանջի մեջ պիտի մատնանշված լինեն՝ իրավաբանական անձի լրիվ անունը, նաև այն անձնավորութային ազգանունը, վորին վստահվում է չեկային գրքույկի ստացումը:

Այն իրավաբանական անձինք, վորոնց համար ընթացիկ հաշիվներ կարող են բացվել միայն պետական բանկի բաժանմունքի թույլտվությամբ, պահանջի հետ պիտի ներկայացնեն և այդ թույլտվությունը:

Իրավաբանական անձի ընթացիկ հաշվի սկզբնական մուծումը 25 ուղբուց պակաս չպիտի լինի:

դ) ընթացիկ հաշվի յուրաքանչյուր մուծումը վերահսկիչը գրանցում է հաշվարկային գրքույկում: Այն դեպքում, յեթե հաշվարկային գրքույկը չի ներկայացված, մուծումն ընդունվում է № 31 ձևի անգորրագրով: Յեթի գործառնությունները հաշվարկային գրքույկում գրանցում է ինքն ավանդատուն:

զ) Ընթացիկ հաշիվներից գումարներ տրվում են թանաքով լրացրած չեկերով: Ընդամենը՝ յուրաքանչյուր չեկում անպայման պիտի մատնանշված լինեն՝ 1) ամսաթիվն, ամիսը՝ բառերով և չեկը տալու տարին, 2) չեկը տալու տեղը, 3) ում պիտի վճարվի չեկի գումարը, յեթե չեկը տրված է վոչ թե ներկայչական, այլ վորոշ անձի անունով, 4) չեկով վճարվելիք գումարը բառերով և թվանշաններով (բացի կոպեկներից), 5) ստորագրություն:

Իրավաբանական անձի ավանդի չեկն անպայման պիտի կնքված լինի այդ կազմակերպութային կնիքով: Չեկի բնագրում վոչ մի ուղղում չի թույլատրվում և ուղղված ու սխալ ձևակերպված չեկերը չեն վճարվում:

Չեկն ուժի մեջ է տաան օրվա ընթացքում՝ սկսած նրա տալու օրից, ընդվորում չեկ տալու օրը հաշվի չի առնվում: Յեթե չեկի ուժի մեջ լինելու ժամկետն ընկնում է խնայդրամարկղի հանգստի օրվան, ապա չեկը վճարվում է հետևյալ առաջին աշխատանքի օրը: Անվանական չեկով դրամ տալիս՝ վերահսկիչն ստացողին ստորագրել է տալիս չեկի հակադիր յերեսին և հենց

նույն տեղում նշում եւ ստացողի կողմից ներկայացրած անցագրային փաստաթղթի համարը և անունը, նաև՝ թե ում կողմից և յերբ եւ տրվել փաստաթուղթը: Ներկայա-
կան չեկով դրամ ստանալու համար ստորագրութիւնն չի
պահանջվում: Անվանական և ներկայական չեկերը վճա-
րելուց հետո պիտի մարվեն վերահսկչի ստորագրութեամբ՝
մատնանշելով վճարման ժամանակը և չեկի առաջին յերեսին
դնելով «վճարված ե» շտամպը: Ձեկի հակադիր յերեսին
գրանցվում եւ ընթացիկ հաշվի մնացորդը և տոկոսների
մնացորդը՝ գործառնութիւնից հետո:

Առանց չեկը ներկայացնելու (ընդհանուր չեկային
գրքույկներով կամ չեկին փոխարինող պահանջագրերով)
ընթացիկ հաշվից կանխիկ դրամները տալն արգելվում եւ:
Հաշվային շրջանառութիւններով փոխանցումներ կարող
են տեղի ունենալ և առանց չեկը ներկայացնելու
(ավանդատուների հրամանների հիման վրա): Իրավաբա-
նական անձի ընթացիկ հաշվում յեղած ավանդի մնացորդը
25 ուլբուլց պակաս չպիտի լինի: Յեթե գումարն ըստ
հրամանի գուրս գրելուց կամ չեկով վճարելուց հետո
ընթացիկ հաշվում մնում եւ 25 ուլբուլց պակաս գումար,
ապա իրավաբանական անձին անհապաղ պիտի հայտնվի
ընթացիկ հաշիվը լրացնելու կամ փակելու անհրաժեշտու-
թյան մասին:

49. Ավանդի կտակային կարգադրութեան ձեւակեր-
պումը:

Կտակային կարգադրութիւն կարող եւ անել միայն
չափահաս և գործունակ ավանդատու-ֆիզիկական անձը:
Կտակային կարգադրութիւնն ավանդատուն գրում եւ
անձնական հաշվի քարտում (ընդամին նրա ստորագրու-
թիւնը հաստատում եւ վերահսկիչը):

Ավանդատուն կտակային կարգադրութիւնը կարող եւ

դրել խնայողական կամ հաշվարկային գրքույկում կամ
խնայգրամարկղին հասցեագրված հայտարարութեան մեջ,
ստորագրելով այդ կարգադրութիւնը: Նման դեպքերում
նրա ստորագրութիւնը պիտի վավերացված լինի այս
հրահանգի 18 հոդվածում սահմանված կարգով, այն բա-
ցառութեամբ, վոր անային վարչութիւնները կտակային
կարգադրութիւնները վրա յեղած ստորագրութիւնները
չեն վավերացնում:

Յեթե ավանդատուն կտակային կարգադրութիւնն
արել եւ վոչ թե անձնական հաշվի կամ խնայողական
(հաշվարկային) գրքույկի վրա, այլ առանձին հայտարա-
րութեան մեջ, ապա այդ կտակային կարգադրութիւնը
խնայգրամարկղին ներկայացնելուց հետո պիտի պահվի
առանձին գործում հաշիվների համարների կարգով (այդ
գործը պահվում եւ պահեստարանում կամ անհրկիղելի
պահարանում): Անձնական հաշվի քարտում գրանցվում եւ
(վերահսկչի ստորագրութեամբ) կտակային կարգադրու-
թեան բովանդակութիւնը: Խնայողական (հաշվարկային)
գրքույկը խնայգրամարկղին ներկայացնելիս, վորով ավան-
դատուն կտակային կարգադրութիւն եւ արել, այդ գըր-
քույկը փոխարինվում եւ նորով, իսկ հին գրքույկը պահ-
վում եւ կտակային կարգադրութիւնների գործում:
Կտակային կարգադրութեան բնագիրը նույնպէս գրանց-
վում եւ անձնական հաշվի քարտում և ստորագրվում եւ
վերահսկչի կողմից:

Ավանդատուն (վորը կտակային կարգադրութիւնը
կազմել եւ 1936 թ. հունվարի 1-ից հետո) պիտի սեփա-
կան ձեռքով, իր սովորական ստորագրութիւնից հետո
մատնանշի փակագծերում իր լրիվ անունը, հայրանունը
և ազգանունը:

Անգրագետ ավանդատուի կտակային կարգադրու-

թյունը պիտի արվի անպայման առանձին թերթի կամ խնայգրքույկի վրա և վավերացվի նոտարական գրասենյակի, ժողդատավորի, շրջգործկոմի, քաղխորհրդի կամ դյուզխորհրդի կողմից:

Խնայողական կամ հաշվարկային գրքույկի շապկերեսի վրա արվում է՝ «ավանդը կտակված է» նշումը: Ավանդատույի ցանկությամբ՝ խնայողական կամ հաշվարկային գրքույկի վրա կարող է գրանցվել կտակային կարգադրության լրիվ բովանդակությունը: Այդ գրանցումն ստորագրում է վերահսկիչը:

Կտակային կարգադրությունների մեջ արված ուղղումներն ու հավելումները պիտի անպայման ծանոթագրված լինեն և ստորագրվեն ավանդատույի կողմից և ավանդատույի ստորագրությունը պիտի նորից վավերացվի նույն կարգով:

Կտակային կարգադրության մեջ պիտի մատնանշված լինի՝

ա) այն անձնավորությունների անունը, հայրանունը և ազգանունը (կամ կազմակերպությունների անունները), փորոնց կտակված է ավանդը:

բ) կարգադրությունը կազմելու ժամանակը:

գ) իր ավանդը մի քանի անձանց կտակող ավանդատուն պիտի մատնանշի, թե նրանցից փորին ինչ բաժին պիտի արվի (որինակ՝ «հավասար» կամ տարբեր բաժիններով):

Յեթե ավանդը կտակված է մի քանի անձանց՝ առանց յուրաքանչյուրի բաժինը ցույց տալու, ապա այդ ավանդը արվում է կտակի մեջ մատնանշված բոլոր անձանց հավասար մասերով:

Գումարային արտահայտությամբ բաժիններ մատնանշելը չի թույլատրվում, փորովհետև ավանդի գումարը

մինչև ավանդատույի մահվան մոմենտը կարող է փոփոխվել:

Կտակային կարգադրությունը վերացնելու կամ փոփոխելու համար ավանդատուն պիտի այդ մասին գրավոր հայտնի դրամարկղին և կցի այն փաստաթուղթը (խնայգրքույկը կամ հաշվարկային և չեկային գրքույկները), փորով արված է կարգադրությունը:

Այդ դեպքում ավանդատույին տրվում է նոր փաստաթուղթ, ընդփորում՝ ավանդը փոխանցվում է նոր հաշվին, նշելով՝ «փոխանցված է № — — հաշվին՝ կտակային կարգադրությունը փոփոխելու կապակցությամբ»:

Ամենավերջին կտակային կարգադրությունը վերացնում է նախնիքացները:

50. Գրանցումներով լցված-վերջացած խնայողական և հաշվարկային գրքույկների, ծախսված չեկերի և անձնական հաշիվների քարտերի փոխարինումը:

Ավանդի և տոկոսների մնացորդն անձնական հաշվի լցված-վերջացած քարտից փոխանցվում է նոր քարտում հենց նույն համարով, ընդ փորում, մնացորդի փոխանցման ճշտությունը վավերացնում է վերահսկիչը: Անձնական հաշվի նոր քարտի վրա ավանդատուն մի անգամ ևս տալիս է իր ստորագրության նմուշը:

Տվյալ հաշվի բոլոր լրացուցիչ քարտերի վրա գրվում է, բացի հաշվի համարից, նաև քարտի հերթական համարը (վերևի աջ անկյունում):

Այն դեպքում, յեթե հաշվի գծով կտակային կարգադրություն կամ պայման է յեղել արված, նոր քարտում նշվում է՝ «ավանդը կտակված է» կամ «պայման է արված»: Քարտակալում նորի հետ միասին պահվում է և սկզբնական մուծման ժամանակ բացված առաջին քար-

տը: Յեթե հաշվի համար մի քանի քարտեր են գրվել-
լցվել, ապա գործող քարտակալում պահվում են միմիայն
առաջին քարտը և ընթացիկ տարվա քարտերը:

Գրված-լցված խնայողական կամ հաշվարկային գրք-
քույկի փոխարեն, ավանդատույին տրվում է նույն հա-
մարով նոր փաստաթուղթ, նշելով նրանում՝ «փոխանց-
ված է ավանդի մնացորդը — ուղբի», նաև գրանցե-
լով նրա մեջ լցված-վերջացած խնայգրքույկում գրված
բոլոր պայմաններն ու կարգադրությունները: Նոր գրք-
քույկում փոխանցված ավանդի մնացորդի և մյուս գրան-
ցումների ճշտությունը վավերացվում է վերահսկչի կող-
մից: Գրված-լցված խնայողական գրքույկը մարվում է
(ճշվում է վերևից և ներքևից, փորից հետո ամբողջ վեր-
նագրայերեսին թեք մակագրվում է՝ «մարված է») և
կցվում է տվյալ գործառնություն որվա փաստա-
թղթերին: Գրված-լցված հաշվարկային գրքույկը նույն-
պես մարվում է և վերագրվում է ավանդատույին:

Այն բանից հետո, յերբ ավանդատուն ծախսում է
իր ստացած հաշվարկային գրքույկի բոլոր չեկերը, անձնա-
կան հաշվի քարտում ստորագրել տալուց հետո նրան տրվում
է (30 կ. վճարով) նոր չեկային գրքույկ, փորի չեկերի հա-
մարները նշվում են անձնական հաշվի քարտի վրա:

Իրավաբանական անձանց չեկային գրքույկներ տըր-
վում են նրանց կողմից խնայգրամարկղին գրավոր պա-
հանջ ներկայացնելուց հետո, փորի մեջ պիտի մատնանը-
ված լինի չեկային գրքույկն ստանալու համար լիազոր-
ված անձնավորության ազգանունը:

Ծախսված չեկերի արմատները չեն վերցվում ավան-
դատույից:

51. Կորցրած խնայողական, հաշվարկային և չեկային
գրքույկների փոխարինումը:

Անվանական խնայողական գրքույկի կորուստի դեպ-
քում (կորցնելը, հափշտակելը, կոտրվածք և այլն) ավան-
դատուն պիտի այդ մասին անմիջապես գրավոր հայտնի
գրքույկը տված գրամարկղին: Համեմատելով հայտարա-
րության և անձնական հաշվի քարտի ստորագրություն-
ները, նշելով անձնական հաշվի քարտի վրա գրքույկը
կորցնելու մասին և հայտարարությունը ցուցակագրելով
կրկնակների (դուբլիկատ) ցուցակագրման գրքում, խնայ-
գրամարկղը հայտարարությունն ուղարկում է հետագա
հսկողության, մատնանշելով հայտարարության վրա ա-
վանդի և տոկոսների մնացորդն՝ ըստ անձնական հաշվի
քարտի տվյալների:

Կրկնակը տալու թույլտվությունն ստանալով հետա-
գա հսկողությունից և համոզվելով նրանում, փոր ավանդի
մնացորդն ըստ անձնական հաշվի քարտի տվյալների և
հետագա հսկողության տվյալների՝ միանման են, վերա-
հակիչն՝ ավանդատուն ներկայանալիս՝

ա) անձնական հաշվի քարտի վերևի աջ անկյունում
մակագրում է «կրկնակ» (դուբլիկատ) և նշում է գրքույ-
կի կրկնակը տալու ժամանակը, նաև ստորագրում է այդ
նշումը:

բ) պատրաստում է նոր խնայգրքույկ, գրանցում է
նրա մեջ ավանդատույի հաշվի մնացորդի գումարը և
նրա վերնայերեսի վերևի աջ անկյունում մակագրում է
«կրկնակ» բառը:

գ) կրկնակը տալու համար ավանդատույից գանձում
է 1 ուղբի:

Որվա վերջում կադմում է № 53 ձևի ամփոփ որդեր՝
որվա ընթացքում կրկնակների համար գանձված վճար-
ների համար, կցելով այդ որդերին ավանդատուների
հայտարարությունները կրկնակներ տալու մասին:

դ) տալիս է նոր գրքույկ ավանդատույից ստորագրութիւն առնելով «նշումներն համար» սյունակում: Տրված կրկնակը միաժամանակ ցուցակագրում է կրկնակները ցուցակագրելու գրքում: Այդ գիրքն ունի հետևյալ սյունակները՝ 1) հայտարարութիւնն ստանալու ժամանակը, 2) հաշվի համարը, 3) ավանդատույի ազգանունն, անունը և հայրանունը, 4) հայտարարութիւնը հետագա հսկողութեանն ուղարկելու ժամանակը, 5) հետագա հսկողութեան թույլտվութիւնն ստանալու ժամանակը, 6) կրկնակը տալու ժամանակը, 7) կրկնակը տվող վերահսկի ստորագրութիւնը:

Մինչև կրկնակը տալը վոչ մի յելքի գործառնութիւն խնայգրքույկը կորցրած ավանդատույի հաշվով չի կատարվում:

Այն դեպքում, յեթե կորցրած գրքույկը հետագայում գտնվի, ուժի մեջ մնում է միայն կրկնակը, իսկ նախկին գրքույկը վերցվում է մակագրելով՝ «մարված է կրկնակ տալու հետևանքով» և ուղարկվում է հետագա հսկողութեան:

Ներկայական խնայգրքույկը, նրա հսկիչ թերթը (կամ հենց այդ յերկու փաստաթուղթը միասին) կորցնելու դեպքում՝ այդ ավանդը տրվում է միայն դատական մարմնի վորոշումով (հրավիրվող դատավարութեան կարգով): Այդ վորոշումը ստանալուց հետո հաշիվը փակվում է, իսկ ավանդը վճարվում է: Ավանդն ստանալու համար ավանդատուն ստորագրում է № 51 ձևի որդերի վրա, ընդվորում նրա ստորագրութիւնը համեմատվում է անցագրային փաստաթղթում յեղած ստորագրութեան հետ: Յեթե ավանդատուն ցանկանում է ավանդը թողնել խնայգրամարկղում, ապա նրա համար բացվում է նոր հաշիվ անվանական կամ ներկայական: Խնայգրամարկղը

վոչ մի հայտարարութիւն չի ընդունում ներկայական խնայգրքույկների և հսկիչ թերթերի կորուստի մասին: Կորցրած ներկայական փաստաթղթերի ավանդները տալու արգելքները տրվում են միայն դատական մարմինների վորոշումով:

Կորցրած չեկային գրքույկի փոխարեն դրամարկդն ավանդատույին տալիս է նոր գրքույկ, նախապես ստուգելով հայտարարութեան ստորագրութիւնն յեղած նմուշների հետ և նրանից ստորագրութիւն առնելով հայտարարութեան վրա (վորն ավանդատուն պիտի անմիջապես ներկայացնի խնայգրամարկղին, նշելով այդ հայտարարութեան մեջ կորցրած չեկերի համարները): Նոր գրքույկի չեկերի համարները գրանցվում են անձնական հաշվի քարտում: Ընդամենը՝ կորցրած չեկային գրքույկի համարների դիմաց նշումն է արվում չեկերի կորուստի մասին (մատնանշելով նրանց համարները): Չեկերի կորուստի և նոր գրքույկ տալու մասին հայտնվում է հետագա հսկողութեան: Նոր չեկային գրքույկ տալու համար ավանդատույից գանձվում է 30 կ, հաշվարկային գրքույկը կորցնելու դեպքում՝ կրկնակը տրվում է միայն ավանդատույի հայտարարութեան համաձայն (առանց ավանդի մնացորդը նախապես հետագա հսկողութեան կողմից հաստատելու):

VIII ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՆԱԾԿԵԼԸ

52. Ավանդների տոկոսները հաշվում և գրանցվում են անձնական հաշվում անպայման հենց գործառնութիւնը նրա մեջ գրանցելու հետ միաժամանակ: Տոկոսները հաշվվում են առաջուց մինչև տարվա վերջը՝ մուծվող կամ հաշվից առացվող լրիվ ուսուրիների գումարի համար:

Տոկոսները հաշվվում են որեւրի այն քանակի համար, վորը մնում է մինչև գործառնության տարվա վերջը, համարելով յուրաքանչյուր լրիվ ամիսը 30 օր:

ա) Բոլոր մուծումների ժամանակ հաշվի յե առնվում միայն որեւրի այն քանակը, վորը մնում է մինչև տարվա վերջը, սկսած գործառնության օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրից:

բ) Բոլոր վճարումների ժամանակ հաշվի յե առնվում որեւրի այն քանակը, վորը մնում է մինչև տարվա վերջը, ներառյալ և գործառնության օրը:

Մուծման գործառնությունների ժամանակ հաշվվող և ավանդների մեջ հաշվեգրվող տոկոսները կոչվում են «հաշված տոկոսներ» (проценты начисленные), իսկ վճարման գործառնությունների ժամանակ հաշվվող և ավանդից գուրա գրվող տոկոսները կոչվում են «պակասեցրած տոկոսներ» (проценты отчисленные):

Անձնական հաշվում գրանցելիս՝ «հաշված տոկոսները» միացվում են նախընթաց գործառնությունից հետո գուրա բերված տոկոսների մնացորդին, իսկ «պակասեցրած տոկոսները» հանվում են այդ մնացորդից: Տվյալ գործառնության համար հաշված տոկոսները միացնելուց կամ հանելուց հետո, գուրա է բերվում և գրանցվում է անձնական հաշվում վրան հաշված տոկոսների մնացորդը:

Գործառնության տարվա ընթացքում ամբողջ ավանդը վճարելու ժամանակ՝ տոկոսները պակասեցվում են ավանդի ամբողջ մնացորդի համար: Տոկոսների ստացված մնացորդը միացվում է ավանդի գումարին և ավանդի հետ միասին տրվում է ավանդատուին:

Գործառնության տարին անցնելուց հետո, հաշիվների տարեկան փակման ժամանակ, ավանդատուների անձ-

նական հաշիվներում առ 1-ն հունվարի յեղող տոկոսների մնացորդը միացվում է ավանդի գումարին:

Գործառնության տարվա սկզբից, այսինքն՝ հունվարի 1-ից, յուրաքանչյուր անձնական հաշվի ավանդի մնացորդի համար (մնացորդ և նրան գումարած միացված տոկոսներ) տոկոսները հաշվվում են առաջուց մինչև գործառնության տարվա վերջը, այսինքն՝ 360 օրվա համար:

Ավանդների տոկոսները հաշվելու համար լնայդրամաբեկները ոգտվում են հատուկ աղյուսակներով:

Այդ աղյուսակներում տպագրված են տարվա յուրաքանչյուր օրում մուծած կամ ստացած ավանդի գումարի համար հասանելիք տոկոսների գումարները:

53. Վերացված է:

54. Իրավաբանական անձանց առանձնապես շարժական հաշիվների համար (օրվա ընթացքում միջին թվով ավելի քան հինգ գործառնություն), վորպես բացառություն ընդհանուր կանոնից, սահմանվում է տոկոսները հաշվելու հետեյալ տեխնիկան՝

ա) Յուրաքանչյուր մուտքի և յեկքի գործառնության ժամանակ տոկոսներ չեն հաշվվում:

բ) Գործառնության տարին վերջանալուց հետո (կամ տարվա ընթացքում հաշիվը փակելիս) հաշվվում են յուրաքանչյուր ամսի յերկու օրերին յեղած ավանդի մնացորդները:

ՊԱՆԴ-ի և ՊՎ-ի Գլխավոր Վարչությունը ամեն տարի վորոշում է (տարեհաշիվեցությունը կազմելու կարգի մասին շրջաբերականում), թե յուրաքանչյուր ամսի առ վոր օրերը պիտի հաշվի առնվեն ավանդի մնացորդները:

գ) Տոկոսների գումարը վորոշվում է (ըստ բանաձևի),
կոտնտեսությունների (մնացորդների գումարը) $\times 3 = \frac{1}{800}$
համար՝ 24×100
մնացած իրավաբանական անձանց (մնացորդների գումարը) $\times 1 = \frac{1}{1}$
համար՝

ՀՀ Ազգային գրադարան



NL0204406

Այդպիսով՝ տոկոսներն ստանալու համար տվյալ հաշվի հաշված մնացորդների հանրագումարը պիտի բաժանել 800-ի (կոլտնետսուժյունների ավանդների համար) կամ 2400-ի (մնացած իրավաբանական անձանց ավանդների համար)։ Մնացորդների հանրագումարը 800-ի կամ 2400-ի բաժանվում է անկախ նրանից, թե ավանդը մնացել է մի ամբողջ տարի (և, հետևապես հաշվի մեջ մտել են ավանդի 24 մնացորդն էլ) թե միայն տարվա մի մասը (և հանրագումարի մեջ մտել է մնացորդների ավելի փոքր քանակ)։

Ընդամեն՝ տոկոսները հաշվվում են լրիվ հարյուրավոր ուղբլինների համար։ Որինչպիսիք էլ լինեն մնացորդների հանրագումարը կադմում է 11, 284 ո. տոկոսները պիտի հաշվել 11200 ո. համար։

ՊԵՏԱՇԽՆՆԱՅԻՐԱՄԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ



Չատ. խմբ. Ա. Կառպարյան
Թարգմ. Գ. Գևորգյան
Տեխ.-խմբ. սրբ. Հ. Մայիլյան